ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվը	«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/46»	«17» նոյեմբերի 2017թ.
2. Պայմանագրի կողմը	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՍՊԸ (անվանումը)	
3. Պայմանագրի առարկան	Գերատեսչական ցանցի /տվյալների հաղորդման/ տրամադրման ծառայությունների մատուցում	
4. Պայմանագրի գումարը	2124000	
5. Պայմանագրի գործողության ժամկետը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիս	
6. Գնումների կատարման ծածկագիրը	ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/46	
7. Հայտերի բացման ամսաթիվը		

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Վարչական տնօրեն	Ա. Շուշյան	
2.	Գլխավոր հաշվապահ	Է. Նիկողոսյան	
3.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Հ. Մարգարյան	
4.	Գնումների համակարգող	Ռ. Ալբերտյան	

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/46

ք. Երևան «14» Դեկտեմբերի 2017թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատուցել սույն պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված գերատեսչական ցանցի /տվյալների հաղորդման/ տրամադրման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունը և վարձատրել դրա դիմաց՝ համաձայն պայմանագրի N 2 հավելվածի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Կատարողի կողմից սույն պայմանագրում նշված ժամկետի խախտման դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել Ծառայության մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.1.3 Չընդունել Ծառայությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայության մատուցումը կամ Ծառայությունը մատուցում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին

գ) Կատարողը խախտել է սույն պայմանագրում նախատեսված ժամկետը,

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ծառայությունը մատուցելիս՝ աջակցել Կատարողին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունը (դրա արդյունքը, իսկ

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

պայմանագրից Ծառայության արդյունքը վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին.

2.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

2.2.4 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Կատարել մատուցվող Ծառայության վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

2.4.2 Ծառայության արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Ծառայության արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

2.4.3 Սույն պայմանագրում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայության մատուցման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Ծառայության մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել պայմանագրով նախատեսված տուգանքը:

2.4.5 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ (Հավելված 3), իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Ծառայության կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կատարողը պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Ծառայությունն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է մատուցված Ծառայության համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե մատուցված Ծառայությունը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

3.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2124000 (երկու միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է՝ 354000 (երեք հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ծառայության գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

4.4 Պատվիրատուն վճարում է Ծառայության կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների վարձի

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
ԲԱԺԻՆ

և ծավալների դիմաց՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով ընդունելու դեպքում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 2 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու, ինչպես նաև նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև

ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
ԲԱԺԻՆ

պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ	Հ/Հ 19300-11980040100
Հ/Հ 1150001122630300	ՀՎՀՀ 00096001
ՀՎՀՀ 01522459	Հասցե՝ Կոտայքի մարզ,
	ք. Աբովյան, 2201, Խաղաղության 1
Ռ. Խաչատրյան	Հ. Ֆարամազյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հավելված թիվ 1
14 դեկտեմբերի 2017 թ.
Ծառայությունների մատուցման
թիվ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/46 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Գերատեսչական ցանցի /տվյալների հաղորդման/ տրամադրման ծառայությունների մատուցում

հ/հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր	Չափման միավորը	Քանակը	Արժեքը (ՀՀ դրամ)	
					Արժեքը (առանց ԱԱՀ)	ԱԱՀ
	Գերատես-չական ցանցի /տվյալների հաղորդման/ տրամադրման ծառայություն-ներ	Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ներքին ցանցային ենթակառուցվածքում: Առանձնացված կապուղու հատկանիշներ՝ Հավելված 1-ում նշված է դեպի նշված հասցեներ կրկնակի օպտիկամանրաթելային կապուղու տրամադրում և նվազագույն արագությունների թողունակությունների ապահովում: • Սիմետրիկ արագությամբ երաշխավորված (CIR) առանց տրաֆիկի որևէ սահմանափակման: Անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրում միացման յուրաքանչյուր կետերում, օպտիկամանրաթելային կապուղիների սպասարկում, բաժանորդների սպասարկման ծառայություն (Help Desk), ծառայության վերահսկում (մոնիթորինգ)՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով: • «latency» ոչ ավել քան 5 ms Հավելված 1-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի • ապահովել «QinQ, STP, Ethernet over MPLS» օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում Անհրաժեշտության դեպքում ինտերնետ հասանելիության տրամադրում 15 մբ/վ թողունակությամբ (սիմմետրիկ, երկկողմանի), առնվազն 14 Real IP հասցեների տրամադրում	1	1	1770000	354000
				Ընդամենը	2124000	

Այլ պայմաններ	
Սկիզբ	Ավարտ
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	12 ամիս

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հ/Հ	Ծառայությունների մատուցման վայրը	Տվյալների փոխանցման նվազագույն արագությունը մբ/վ
1	ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	100
2	ք. Երևան, Բագրատունյաց 6 փակ., 12շ.	20
3	ք. Սևան, Էներգետիկների 4	20
4	ք. Գյումրի, Ղարսի խճ.25	20
5	ք. Վանաձոր, Թևոսյան 2	20
6	ք. Գորիս, Երևանյան խճ. 1	20
7	ք. Կապան, Գործարանային 15	20
8	ք. Երևան, Կոմիտաս 35/2	20

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001726300300
ՀՎՀՀ 01522459

Ռ. Խաչատրյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300-11980040100
ՀՎՀՀ 00096001
Հասցե՝ Կոտայքի մարզ,
ք. Աբովյան, 2201, Խաղաղության 1

Հ. Ֆարամազյան
(ստորագրություն)

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հավելված թիվ 2

17 նոյեմբերի 2017 թ.

Ծառայությունների մատուցման

թիվ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/46 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Վճարման պայմաններ	Երկկողմ ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշված 30 աշխատանքային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1

«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ

Հ/Հ 1150001172630300

ՀՎՀՀ 01522459

_____________ Ռ. Խաչատրյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ

«Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300-11980040100

ՀՎՀՀ 00096001

Հասցե՝ Կոտայքի մարզ,

ք. Աբովյան, 2201, Խաղաղության 1

_____________ Հ. Ֆարամազյան

(ստորագրություն)

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հավելված թիվ 3
17 հոկտեմբեր 2020 թ.
Ծառայությունների մատուցման
թիվ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/46 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

HVE
ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ

0084 Հայաստան, Երևան, Զոր. Անդրանիկի 1

«———» ——————— 2017թ.

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ»ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՌԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի պարոն Խաչատրյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գերատեսչական ցանցի /տվյալների հաղորդման/ տրամադրման ծառայությունների ձեռքբերման համար առաջարկում եմ ստեղծել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Նախագահ՝

Հարություն Գևորգյան	- մատակարարման բաժնի պետ

Անդամներ՝

Հայկ Գրիգորյան	- ցանցային գլխավոր ադմինիստրատոր
Կարեն Բարիկյան	- ցանցային ադմինիստրատոր
Արիստակես Գևորգյան	- մատակարարման բաժնի պետի տեղակալ
Դավիթ Գասպարյան	- մատակարարման բաժնի մասնագետ

Քարտուղար

Ռոմեո Ալբերտյան	- մատակարարման բաժնի պետի տեղակալ

Ընդհանուր բաժնի պետ Սուսաննա Մուղումյան

Կատարող
Հայկ Գրիգորյան